

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՎ ԷՋՄԻԱԾՆԱՍԵՐ ԳՈՐԾԻՉԸ



Հ թե անունը անձը, այլ անձն է, որ կփառավորե անունը, հակառակին մտածությունը անհեթեթություն մը պիտի ըլլար»:

Արևմտահայ մտավորականության փայլուն զեմքերից Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի գրչին պատկանող վերեւի խորհրդողածությունը, երբ «անուն» եզրը փոխարինենք «տիտղոս» կամ «պաշտոն» եզրով, ինչքան կպատշաճի վերջերս մահացած Կիլիկիայի ծերունազարդ Հայրապետին՝ Գարեգին Հովսեփյանին:

«Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս» տիտղոսը կամ պաշտոնը չէր, որ նրա համար հեղինակություն ստեղծեց, այլ այդ տիտղոսը կամ պաշտոնն էր, որ փառավորվեց, ավելի հմայք ստացավ այն օրից, երբ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը սկսեց կրել այդ տիտղոսը և զբաղեցնել Կիլիկիո Կաթողիկոսության գահը:

Կան այս կամ այն բնագավառի մեջ մեծության համբավ ունեցող անձնավորություններ, որոնց հետ ինչքան մոտիկից շփվես, որոնց ինչքան մոտիկից տեսնես, շուտից ու ճանաչես, այնքան կհիասթափվես, այնքան կգիտակցես, թե այս կամ այն կերպով այն անձնավորության կպցրած համբավի ու փառքի լուսապսակը, հեռվից թվացող մեծությունը, շինծու են, փցուն, կարծեցյալ: Գարեգին Հովսեփյանի հետ հակառակն էր պատահում. ինչքան մոտիկից ծանոթանում էիր նրա անձնավորությանը, նրա կերպարին, այնքան ավելանում էին, գերադրական աստիճանի հասնում հարգանքդ, սերդ, հիացքդ:

Հոգեւոյս Գարեգին Կաթողիկոսը, եթե շինեիր ժողովրդանվեր, հայրենասեր, բոցա-

շունչ հասարակական գործիչ, բազմահմուտ գիտնականի իր տաղանդն ու վաստակը բավարար պիտի լինեին պատվավոր մի տեղ ապահովելու նրան մեր ժողովրդի պատմության մեջ: Եթե չլինեիր բազմահմուտ գիտնական, հայրենանվեր հասարակական գործիչի իր հանգամանքը բավարար պիտի լինեիր միեւնույն պատվավոր տեղն ապահովելու նրան: Բայց նա և՛ մեկն էր և՛ մյուսը միաժամանակ՝ մեծ գործիչ և մեծ գիտնական: Այդ իսկ պատճառով, նա դարձել էր ջերմ սիրո և խոր հարգանքի առարկա՝ Սփյուռքի և՛ մասսաներին և՛ մտավորականությանը: Նրա մահվամբ՝ Սփյուռքի հասարակական կյանքում բացվում է մի մեծ դատարկություն, որը լցնելու ընդունակ որեւէ անձնավորություն չենք տեսնում առ այժմ...:

1935 թվականը շրջադարձային եղավ մտավորապես ութսունհինգամյա մահացած այս անձնավորության բազմաբեղուն կյանքում: Մինչև վերահիշյալ թվականը, նա պատկանում էր գլխավորաբար արևելահայոց՝ ծնունդով թե գործունեությամբ: Այդ թվականին, էջմիածինը շատ իմաստուն, հեռատես և բարերար հետևանքներով հարուստ մի կարգադրություն արեց—Գարեգին արքեպիսկոպոսին ուղարկեց արտասահման, կաթողիկոսական նվիրակի պաշտոնով: Եվ 1935 թվականից այս կողմ, Գարեգին Հովսեփյանը պատկանեց գլխավորաբար արևմտահայությանը:

Մինչև 1935 թվականը, Սփյուռքի վերածված արևմտահայության մեջ, մատի վրա էին հաշվվում այն անձնավորությունները, որ անունով կամ անձամբ կճանաչեին Գարեգին Հովսեփյանին: Իսկ 1935 թվականից ի վեր Սփյուռքի մեջ մատի վրա կհաշվվեն այն անձերը, որ չեն ճանաչում նրան՝ անունով կամ անձամբ:

Գարեգին Հովսեփյանը, եթե իր հասարակական գործունեությամբ մոտավորապես հիսնամյա մի ժամանակաշրջանով պատկանել էր արևելահայոց, իսկ մոտավորապես մի քսանամյակով՝ արևմտահայությանը, իր գիտական գործունեությամբ նա եղել էր ողջ հայությանը, ներկա և ապագա հայությանը: Իրոք, նա բազմամյա մտածող, մավաստակ պատմաբան-քանասեր էր, մասնագետ և հեղինակություն հատկապես հայկական գրչագրության և մանրանկարչության: 45 տարվա աշխատանքով և ավելի քան 10.000 գրչագրի մանրագնին վերծանումով կազմված է իր «Հիշատակարանք ձեռագրաց» ժողովածուն: Ունի մոտավորապես 30 տպագրված գործեր և ոչ պակաս քան մի տասնյակ հրատարակելի մեծարժեք երկասիրություններ:

1935—1936 թվականներին, որպես հայրապետական նվիրակ իր շրջագայությունը սփյուռքում՝ հաղթական մի երթ էր: Ամենուրեք, ուր նա գտնվեց, խոսեց, շփվեց հասարակության լայն խավերի հետ, իսկույն ևեթ համագործակց համակրությունները, հիացումները, սրտերը: Ընդամենը մի քանի ամսում նա կարողացավ դառնալ կենտրոնական դեմք բովանդակ Սփյուռքում:

Շրջելուց և հայրենասիրական բարձր խանդավառություն ստեղծելուց հետո Բալկանյան երկրներում, Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում և Մերձավոր Արևելքում, 1936 թվականի հունվարի 4-ին Գարեգին Հովսեփյանը հասնում էր Եգիպտոս, ուր իրենից առաջ հասել էր արդեն իր առաջընթաց համբավն ու շատ նպատավոր, շատ դրական տրամադրություն ստեղծել իր անձնավորության հանդեպ:

Այդ այցելության առաջացրած տպավորությունը այսպես արձանագրված է մի հուշատետրում.

«Հայոց պատմության խորքերին հառնած մեր երանաշնորհ հայրապետներին մեկն էր կարծեք, մեծ ու գրավիչ: Սկզբիցվո շնորհալի իշխան, պերճախոս քարոզիչ, ուժեղ բեմբասաց, բազմահմուտ դասախոս՝ խոսեցավ ան մեզի եկեղեցիվ բեմին, առաջնորդարանի սանդուխներին, համալսարանի մեծ հանդիսասրահի ամբիոնին, խոսեցավ մեզի տուններու և ժողովներու մեջ, ինքզինքը շռայլելով անխնա և չսպառելով երբեք ինչպես առատաբույս շատրվան մը: Խոսեցավ էջմիածնի մասին, Հայաստանի մասին, հայ արվեստի և հայ մշակույթի մասին, և ամիս մը ամբողջ արգավանդ եռուղեռի մեջ, տեսակ մը համազգային արթնության փ մեջ պահեց մեր գաղութն ալ, այնքան ուրիշ գաղութներ

րե հետո: Էջմիածնա ոգին և Հայաստանի շունը կրցավ բերել և հաղորդել մեզի: Ինքզինքնիս զգացինք մասը հին ու նոր հայության, ամբողջության մը, որուն մեծ սիրտը կտրուկ նույն կշռույթով և միևնույն հույզերով: ...Հայրապետը լավագույն ընտրությունը ըրած է, իբր նվիրակ նշանակելով նման անձնավորություն մը, զոր եգիպտահայությունը սիրեց ըսկաբար, առաջին իսկ շփումին անոր հետ, զոր եգիպտահայությունը «հայրագրեց» անմիջապես, կաթոգին գործով և խորունկ հարգանքով միաժամանակ»:

Եգիպտոսը միակ գաղութը չէր, որ այդպիսի ջերմ ընդունելություն արեց էջմիածնա նվիրակին, Սովետական Հայաստանի աճի և շինարարության բաներին, սովետաբերին: Նույն ջերմ, սրտագին ընդունելությունը՝ բոլոր գաղութներում, բոլոր թերթերի կողմից: Անգամ թշնամական շրջաններն ու թերթերը չէին համարձակվում դեմ գնալ համաժողովրդական հոսանքին, չէին համարձակվում մուր արձակել այս պատկառազգու անձնավորության վրա, հակառակ իրենց փափագին...

Սփյուռքը այնքան հարգեց ու որդիական աղապատանքով հարեցավ այս հայրենասեր ու գիտնական գործիչին, որ շուգեց բաց թողնել նրան. Գարեգին արքեպիսկոպոսը ընտրվեց առաջնորդ ամերիկահայոց 1936 թվականին, ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս 1943 թվականին, քահակալեց 1945 թվականի ապրիլին: Այդպիսով, նա մնաց Սփյուռքում, որպես սփռված էջմիածնասեր և հայրենակարոտ պանդուխտ հայության: Այնտեղ էլ, Սփյուռքում, նա մահացավ ութսունհինգամյա, այսինքն՝ անմահացավ:



Ի՞նչն էր պատճառը, որ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը այդքան ջերմ սեր և ժողովրդականություն վայելեց Սփյուռքում: Իր անձնական անժխտելի արժանիքներն ու առաքինությունները, իր պերճախոսությունը, իր գիտնականի լայնապարփակ հմտությունը, իր օժուն ու շնորհալի արտաքինը: Այս բոլորն իրենց դերն ունեցան անտարակույս, բայց բուն, վճռական պատճառն այն է, որ մատանշել է հայագետներից մեկը. «Նա մի անձնավորություն է, — ասել է պրոֆ. Արա համյանը արտասահման եղած պատվիրակության ժամանակ խոսելով Գարեգին Հովսեփյանի մասին, — որի սրտի մեկ կեսը Սովետական Հայաստանն է, իսկ մյուս կեսը՝ Սուրբ Էջմիածինը»:

Սփյուռքը որդիական խանդակաթ սիրով և կարոտաբաղձությամբ սիրում էր Սովե-

տական Հայաստանն ու էջմիածինը, դրա համար էլ իսկույն եեթ հաղորդակցեց այն ջերմ մեծ սրտի հետ, որի կեսը Սովետական Հայաստանն էր, իսկ մյուս կեսը՝ Սուրբ Էջմիածինը:

Գարեգին արքեպիսկոպոսը, Սփյուռքում իր կյանքի և գործունեության մոտ քսանամյա շրջանին, չէր կարող մոռանալ և չմոռացավ Սովետական Հայաստանն ու էջմիածինը: Շարունակ և անընդհատ իր խոհերը դարձան այդ երկու հիմնական առանցքների շուրջը. իր սիրտը շարունակ տրոփեց նրան լցնող երկու մեծ սերերով: Միշտ, և հատկապես Հայրենական պատերազմի տարիներին, նա իր հմայքոտ գրչով և նույնքան հմայքոտ լեզվով Սփյուռքի ուշադրությունն ու գործուն համակրությունը կենտրոնացրեց մարտնչող Հայրենիքի շուրջը: Նա ազդու կոչեր արեց, որ Սփյուռքը լայն մասնակցություն բերի «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման, նախապահեց Հայաստանի սովետականացման տարեդարձի հանդիսություններին արտասահմանում, զգաց, գործեց, գրեց, խոսեց, միշտ յուրահատուկ վեհություններ, ջերմ հռչակներով:

Կիլիկիոս Կաթողիկոս ընտրվելուց հետո էլ՝ երջանակահյատակ Հայրապետը շարունակեց մտածել Այրարատյան Մայր Աթոռի հմայքը բարձրացնելու մասին:

Ամերիկայից դեպի իր աթոռանիստը՝ Անթիլիաս իր ճանապարհի վրա, 1945 թվականի փետրվարի 22-ին նա ժամանեց Կահիրե, որտեղ մնաց մեկ ամիս: Իր հայրենասերի մեծ սիրտը, որ Հայրենական պատերազմի սկզբնական շրջանի նահանջների լուրերից մորմոքվել էր, ի նշան ուրախ էր 1945 թվականի փետրվարի օրերին, երբ Սովետական բանակները սլանում էին արդեն հաղթարշավ և անդիմադրելի թափով ընթանում դեպի Բեռլին: Համարյա ամեն օր հանդիպում էին: «Ի՞նչ են վերջին լուրերը, — հարց էր տալիս նա ոգևորված, հենց որ տեսնում էր ինձ. — ո՞րտեղ են հասել մեր բանակները: Պատասխանում էին: Ինք անձամբ եղել էր Գերմանիայում, ծանոթ էր տեղերին, և դառնալով դեպի իրեն շրջապատող անձնավորությունները, պատանեկան ոգևորությամբ մեկնապանդում էր օրվա լուրերը: «Սովետական ուժը դեռ դուք չգիտեք. Սովետական ուժն անդիմադրելի է», — կրկնում էր նա հպարտանքով, ցնծալից:

Նա ջերմ բաղձանք ուներ ուս մարդկանց հետ ուսերեն խոսել մոտալուտ հաղթանակի մասին, որի կենսագործման մեջ մեծագույն բաժինն ունեցել էր և ունենում էր ուս մեծ ժողովուրդը:

Մահագրականները, հետ մահու, վերհուշերի ձևի տակ գրի առնված տպավորությունները, հուզմունքի և արցունքի ոսպնյակով հաճախ կարող են ձևազեղվել. մարդ կարող է ակամա շափազանցությունների մեջ ընկնել, դիմել հիպերբոլի: Ես դառնում եմ, որ դեպքերի և հանդիպումների անմիջական տպավորության տակ գրված սուղերը, ասված խոսքերը առավել վստահելի են, առավել ճշգրիտ ու հարազատ: Թող թույլ տրվի այստեղ բերել Գարեգին Հովսեփյանի ճգիպտոս երկրորդ այցին (1945 թ.) հայ համայնքի մեջ ստեղծված խանդավառության նոր զեղումները նկարագրող մի հատված մեր հուշատետրից.

«...Ամեն տեղ ինքն է, «ալևուր հսկան»:

«Ալևուր է, այո», յոթնասունեութամյա այս առույգ նահապետը, սպիտակափառ վարս ու մորուքով, սիրելի և պատկանելի միաժամանակ: Եվ հսկա՝ մը իրոք: Հսկա մը՝ հավատքի և ազգասիրության, հմտության և պերճաբանության:

«Ամեն տեղ ինքն է: Ամեն տեղ, և առաջին հերթին, ու ամեն օր, հայ մամուլի էջերում վրա իր ներկայության թելադրած խորհրդածություններով և զգացումներով, իր այցելությանը արձագանքներով, իր քարոզներուն և ճառերուն ամփոփումներով, իր ընտանի և հայրական կերպարանքին պատկերներով...»

«Ամեն տեղն ինքն է: Ամեն տեղ՝ հայ եկեղեցիներում բեմերում վրա, ազգային առաջնորդարանի դահլիճներում մեջ, ուր հայ Հայրենիքին, Հայաստանյայց եկեղեցւոյն, հայկական մշակութիւն և առհասարակ հայոց ժողովրդի արժեքներուն և արժանիքներուն մասին այնքան սրտառու և սրտազրույթանք կրեմ մեզի. հայ վարժարաններում մեջ, ուր իր ներկայությունը և իր հայրական խոսքերն ու հորդորները այնքան անջնջելի տպավորություններ հառաջ կրեքն մատաղ աշակերտության հոգիներում մեջ և այնքան խրախուսիչ կրկան ուսուցչության համար. անհատ հայերու տուններում մեջ, ուր Հովվապետին և հոտին միջև կապերը կամրապնդվին սիրո և նվիրումի ամրակուտ յղակներով, և, վերջապես, օտար պատրիարքարաններու և դեսպալատանց մեջ, ուր հայությունը այնքան պատվավորապես և նպաստավորապես ներկայացված կրկան հանձին Հայաստանյայց հինավուրց եկեղեցւոյն մեկ պատկանելի և համակրելի դեմքին:

«Ան, Վեհափառը, «ալևուր հսկան» առինքնած, համագրաված է սրտերը և մտածումները համօրեն եզրիպատահալոց: ...Սիրո և հիացման այս զգացումները հանդեպ մեծ

Հովվապետին և հանդես ալն իդեաններուն և հաստատութեանց, որոնց դռնակներն ու առաքելն է ինք, պղատոնական շէն միայն, և կրնան շողափնիլ պտուղներ տալ»:

Կիլիկիայի Կաթողիկոս ընտրված և դեպի իր աթոռանիստը իր ճանապարհի վրա, Գարեգին Հովսեփյանի մտածումների և գուրգուրանքի առարկան մնում էր Այրարատյան Մայր Աթոռը: Հանգուցյալը Սգիպտոսում տված մի ինտերվյուում հայտարարեց.

«Մեր եկեղեցական բարձր Աթոռներն յուրաքանչյուրին զարգացումը, բարձր վիճակը՝ փոխադարձաբար զարգացումն ու բարձր վիճակն է մշտաներուն:

«Առաջին հերթին Մայր Աթոռն ունիմ նկատի:

«Նա առիթը կունենամ պաշտոնապես ալ արտահայտվելու այս մասին, բայց այժմն իսկ կուզեմ, որ մեր ժողովուրդն իմանա, թե Կիլիկիան Աթոռը, ներքին վարչական խնդիրներու մեջ անկախ, միշտ պիտի մնա Հայաստանյայց եկեղեցւոյ Ընդհանրական Հայրապետութեան հետ, ընդհանուր եկեղեցական հարցերու մեջ, և եղբայրական սերտ հարաբերություններ պիտի պահեն Մայր Աթոռին հետ: Հարկ է ամեն բանն առաջ լայնագույն չափով գորացնել Մայր Աթոռը, մեր Ընդհանրական եկեղեցիին հեղինակութեան և հմայքին պահպանությունը ըլլալով կենսական: Իմ ցանկութեանս է, եթե Աստված կարելիութեամբ տա ինձի, անձամբ իմ թեմերուս եպիսկոպոսներուն հետ երթալ Սուրբ Էջմիածին, մասնակից ըլլալու համար եկեղեցական համագումարին և Ընդհանրական Հայրապետին ընտրութեան: Մայր Աթոռը և Սուրբ Էջմիածնա մեջ կայանալիք ազգային-եկեղեցական համագումարը իմ մտածումներուս առաջին առարկան է»:

Այդ հայրենաշունչ, վեհ մտածումների հանդիսարան գրությունը հրատարակութեան տրվեց Սփյուռքի համարյա բոլոր թերթերում:

Այդ օրերին՝ իր աթոռանիստը՝ Անթիլիաս (Լիբանան) մեկնելուց առաջ, Վեհափառը ցանկութեամբ հայտնեց, որ այս սուղերը գրողը և եպիսկոպոսն է մի շարք անձնավորությունների՝ եթե հնարավորութեամբ ունենան, ներկա լինեն իր օծման հանդիսություններին:

1945 թվականի ապրիլի 8-ին 25-ից ավելի եպիսկոպոսային ներկա եղանք այդ հանդիսություններին, որ տեղի ունեցան արտակարգ շուքով, Կիլիկիան բոլոր թեմերից եկած տասնյակ հազարավոր մարդկանց մասնակցութեամբ:

Իր օծումից մի քանի օր հետո, Կաթողիկոսարանի իր առանձնասենյակում ընդունելով այս սուղերը գրողին, Վեհափառը հայտարարեց, թե ինչ դեռ ցանկութեամբ էր միայն դեպի Անթիլիաս իր ճանապարհի վրա, այժմ, արդեն, փոխվել էր վերջնական որոշման, թե որոշած էր անվերապա ներկա լինել Էջմիածնա համագումարին: Բաժանվեցինք ապրիլի վերջերը՝ հունիսին Նրևանում և Էջմիածնում միմյանց գտնելու փոխադարձ խոստումով:

Իսկ բախտը բերեց, որ հանդիպենք և ուղեկիցներ լինենք միմյանց՝ սկսյալ Լիդայից (Պաղեստին): Իրոք, հունիսի 6-ին հանդիպեցինք այդ փոքրիկ քաղաքի օդանավային կայանում, ճանապարհորդելով տարբեր ինքնաթիռներով: Միմյանց դուռնք հաջորդ օրը, թեհնալու, որտեղից միատեղ թավրիղ թռանք սովետական մի խոշոր ինքնաթիռով: Թավրիղից սովետական Զուլֆա, և սովետական Զուլֆայից Նրևան՝ միատեղ էինք: Հունիսի այն անմոռանալի օրը, միասին մուտք գործեցինք հայրենի հողի վրա, միասին ողջունեցինք հայրենական լուսաբացը, միասին դիտեցինք Մայր Արաքսը և հայրենի անկրկնելի Մասիսը, սրտատրոփ, արցունքներից տամկացած աչքերով: Միասին մտանք մեր վերանորոգ Հայրենիքի վերանորոգ և դեղակառույց մայրաքաղաքը, անշափ հրճվանքով և հպարտանքով:

Այս, այս անխոնջ և ոգելից գործիչը, չնայած, որ յոթասուսուսու տարեկան հասակ ուներ այն ժամանակ, հանձն առավ երկարատև և հոգնեցուցիչ մի ճանապարհորդություն, ներկա եղավ և նախագահեց Էջմիածնա համագումարին, ստեղծելով պատմական մի նախադեպ, և այդ ակտով նվիրագործելով հայրապետական երկու դահերի միությունը և պաշտոնապես ընդունելով Մայր Աթոռի «նախամեծար» հանգամանքը, գերազանցությունը:

Գարեգին Վեհի անշափելի մեծության շքեղ պսակումը եղավ այս աննախընթաց ակտը:

Նա, Գարեգին Վեհը, իր բովանդակ երկարատև կյանքի ընթացքում, եղավ և մնաց վեհ և անբասիր՝ հոգով, մտքով և հասարակական-գիտական գործունեությամբ:

Հայ ժողովրդի պատմությունը անթառամ և անվթար կպահի նրա գուրգուրալի հիշատակը՝ հավերժապես:

Իցի՛վ թե Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահի վրա նրա հաջորդը նմանվեր նրան — լիներ նրա պես կայուն և ջերմեռանդ հայրենասեր և Էջմիածնասեր: